«ԿՐԿՆԱԿԻ ՖՈՐՍԱԺ» ԱՌԱՋԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Բոլոր անձանց, ովքեր սկսած 01.02.2017թ. բաժանորդագրվում են «Ռինտերնետ» սակագնային փաթեթին 1 տարի բաժանորդագրության պայմանով, տրամադրվում է տվյալ սակագնով սահմանված արագության կրկնապատիկ արագություն ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարվա ընթացքում:

2. Եթե Բաժանորդը սույն պայմանների կետ 1-ում սահմանված կարգով միանում է «Ռինտերնետ» սակագնային փաթեթին փաթեթին 1 տարի բաժանորդագրության պայմանով և ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարվա ընթացքում ծառայությունների մատուցումը ժամանակավորապես կասեցնում է, կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցումը կասեցվում է, տվյալ սակագնի շրջանակներում սույն պայմանների կետ 1-ում նշված կարգով տրամադրվող կրկնապատիկ արագության ժամկետը չի երկարաձգվում ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ:

3. Եթե Բաժանորդը սույն պայմաններով սահմանված կարգով ստացել է ինտերնետի կրկնակի արագացում և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Ռինտերնետ» սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի, «Դուո Սիրելի» սակագնային փաթեթին կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել ինտերնետի կրկնակի արագությունից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով/սակագնով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև ինտերնետի կրկնապատկված արագության գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմաններով տրամադրված ինտերնետի կրկնապատիկ արագության պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

Եթե Բաժանորդը սույն պայմաններով սահմանված կարգով չի օգտվում ինտերնետի կրկնակի արագացման առաջարկից, ապա նա կարող է ստանալ ինտերնետի կրկնակի արագություն՝ բացառապես միանալով «Ռինտերնետ» սակագնային փաթեթին տարեկան բաժանորդագրության պայմանով կամ վերակնքելով/երկարաձգելով/գործող պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ պայմանագիրը մինչև սույն պայմաններով միանալու վերջնաժամկետի ավարտը:

4. «Կրկնակի ֆորսաժ» առաջարկի շրջանակում «Ռինտերնետ» սակագնային փաթեթին 1 տարի պարտադիր բաժանորդագրության դեպքում Ինտերնետ ծառայության ակտիվացման պահից սկսած 1 տարի հետո գործում են «Ռինտերնետ» սակագնային փաթեթով սահմանված

Ինտերնետի հիմնական՝ առանց պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ միանալու դեպքում սահմանված արագությունները:

5. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:

6. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: